ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/61

ք. Երևան «17» նոյեմբերի 2017թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Թուփուզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մոնիթորինգային ցուցանիշների մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3075000 (երեք միլիոն յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները՝ բացառությամբ այն վճարները, որոնց համար «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված են արտոնություններ:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց վճարումն իրականացվելու է Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության կողմից «Օժանդակություն Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տրամադրվող ֆինանսական միջոցներից, և «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների գծով արտոնությունների հետ կապված հարաբերությունները կարգավորվելու են ««Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների արտոնություններից օգտվելու մասին» ՀՀ օրենքով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք. Երևան, Սայաթ-Նովա 19
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013000311	Հ/Հ 1930000625400100
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 01538458
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ info@bc.am

Հավելված N 1
«17» նոյեմբերի 2017թ. կնքված
ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/61 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավե-րով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չ/մ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհա-նուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79411220/3	Կրթության ոլորտում մոնիթորինգային ցուցանիշների մշակման խորհրդատվական ծառայություններ՝ համաձայն ստորև նշված տեխնիկական բնութագրերի.	դրամ	768750	1 (մեկ)	ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական թիվ 1 շենք	ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սույն պայմանագիրը հաշվառվելու հաջորդ աշխատանքային օրվանից հաշված՝ 20 աշխատանքային օրում:
2	79411220/3	Առողջապահության ոլորտում մոնիթորինգային ցուցանիշների մշակման խորհրդատվական ծառայություններ՝ համաձայն ստորև նշված տեխնիկական բնութագրերի.	դրամ	768750	1 (մեկ)		
3	79411220/3	Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում մոնիթորինգային ցուցանիշների մշակման խորհրդատվական ծառայություններ՝ համաձայն ստորև նշված տեխնիկական բնութագրերի.	դրամ	768750	1 (մեկ)		
4	79411220/3	Ոստիկանության՝ քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ոլորտում մոնիթորինգային ցուցանիշների մշակման խորհրդատվական ծառայություններ՝ համաձայն ստորև նշված տեխնիկական բնութագրերի.	դրամ	768750	1 (մեկ)		
Ընդամենը՝				3075000			

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման նպատակով մոնիթորինգային ցուցանիշների մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ

1. Նախապատմություն

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությունը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող "Օժանդակություն Հայաստանում հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը" ծրագրի շրջանակներում նպատակ ունի ֆինանսավորել սույն տեխնիկական առաջադրանքով նախատեսված ծառայությունները Հայաստանի Հանրապետության 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության ներքո մշակված չորս գերակա ոլորտների՝ կրթության, առողջապահության, պետական եկամուտների հավաքագրման և ոստիկանության՝ ծառայությունների մատուցման մասով միջոցառումների ծրագրերի մոնիթորինգի ծրագրերի մշակման նպատակով:

1.2 Վերոնշյալ ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին և Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող 4 անկախ փարձագետները մշակել են Հայաստանի Հանրապետության 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության չորս գերակա ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի չեզոքացմանը ուղղված գործողությունների ծրագիր:

1.3 Հաշվի առնելով առկա կարողությունները, ուսումնասիրությունների արդյունքում ակնհայտ է դարձել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին և Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող 4 անկախ փորձագետների հետ համագործակցելու նպատակով անհրաժեշտ է ներգրավել այնպիսի Խորհրդատուներ (Կատարող), որոնք ունակ կլինեն մշակել գերակա յուրաքանչյուր ոլորտի (ոլորտների) միջոցառումների պլանի իրականացման մոնիթորինգային պլան՝ հստակ, չափելի, վերագրելի, իրատեսական և ժամկետային /SMART – specific, measurable, attributable, reasonable and timely/ չափորոշիչներով:

1.4 Նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ փորձագիտական աջակցություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը ձեռնամուխ է եղել սույն տեխնիկական առաջադրանքում սահմանված պայմաններով և նշված գործողությունների ծրագրերի մշակմանը օժանդակելու նպատակով ներգրավել Խորհրդատուներ:

2. Առաջադրանքի իրականացման հիմնական նպատակները

2.1 Սույն առաջադրանքով պահանջվող ծառայությունների հիմնական նպատակն է աջակցության տրամադրումը 4 տեղական ոլորտային փորձագետներին՝ մշակելու գերակա յուրաքանչյուր ոլորտի (ոլորտների) միջոցառումների ծրագրի իրականացման մոնիթորինգային պլան՝ հստակ, չափելի, վերագրելի, իրատեսական և ժամկետային /SMART – specific, measurable, attributable, reasonable and timely/ չափորոշիչներով: Խորհրդատվական ծառայությունը ներառում, բայց չի սահմանափակվում մոնիթորինգային ցուցանիշների մշակմամբ և ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի, ԱՄՆ ՄԶԳ-ի, հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմի իրականացման աշխատակիցների և փորձագիտական հանձնախմբի համար անհրաժեշտ նեղ մասնագիտական խորհրդատվության ապահովմամբ:

3. *Առաջադրանքի իրականացման մեթոդոլոգիան և եղանակները*

Պատվիրատուն ակնկալում է, որ սույն առաջադրանքն իրականացնելու նպատակով Կատարողները պետք է իրականացնեն հետևյալ հիմնական գործողությունները.

3.1 Աշխատանքային խորհրդակցություններ ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի, ԱՄՆ ՄԶԳ-ի, հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմի իրականացման աշխատակիցների և 4 ոլորտների ծրագրերը համակարգող յուրաքանչյուրն իր ոլորտում (ոլորտներում) գործող պատասխանատուների հետ:

3.2 Աշխատանքային համագործակցություն միմյանց հետ՝ այդ թվում աշխատանքների իրականացման սկզբից ևեթ մշակել միօրինակ մոնիթորինգային պլանի իրականացման մեթոդի/մոտեցումների և ձևաչափի մշակման նպատակով:

3.3 Մշակել գերակա ճանաչված՝

1-ին չափաբաժին_ կրթության

2-րդ չափաբաժին_ առողջապահության

3-րդ չափաբաժին_ պետական եկամուտների հավաքագրման

4-րդ չափաբաժին_ ոստիկանության՝ քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով

ոլորտներում, յուրաքանչյուրն իր ոլորտի (ոլորտների) միջոցառումների պլանի իրականացմանն ուղված մոնիթորինգային պլան՝ հստակ, չափելի, վերագրելի, իրատեսական և ժամկետային /SMART – specific, measurable, attributable, reasonable and timely/ չափորոշիչներով մոնիթորինգային ցուցանիշների մշակում, մեթոդական աջակցության տրամադրում, որի արդյունքում վերջնական տեսքի կբերվեն անկախ փորձագիտական հանձնախմբի հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերը:

4. *Առաջադրանքի իրականացման ընթացքում ներկայացվող արդյունքները*

4.1 Առաջադրանքի իրականացման ընթացքում Կատարողները պետք է մշակեն մոնիթորինգային պլան՝ հստակ, չափելի, վերագրելի, իրատեսական և ժամկետային /SMART – specific, measurable, attributable, reasonable and timely/ չափորոշիչներով, հակակոռուպցիոն ծրագրերի վերոնշված 4 ոլորտների յուրաքանչյուրն իր ոլորտի (ոլորտների) համար:

4.2 Յուրաքանչյուր ոլորտի (չափաբաժնի) առաջադրանքի իրականացմանը պետք է ներգրավված լինի առնվազն մեկ աշխատակից (խորհրդատու), ով չի կարող միաժամանակ իրականացնել սույն ընթացակարգի այլ ոլորտի (չափաբաժնի) առաջադրանք՝ բացառությամբ Պատվիրատուի համաձայնությամբ, ոչ ավել քան լրացուցիչ մեկ ոլորտի (կախված ոլորտների առանձնահատկություններից):

4.3 Նախքան պլանների վերջնականացումը՝ դրանց ներկայացում շահագրգիռ կողմերին:

5. *Առաջադրանքի տևողությունը և Պատվիրատուի հետ համագործակցությունը*

5.1 Սույն առաջադրանքով նախատեսված ծառայությունները մատուցել 20 աշխատանքային օր:

5.2 Կատարողների հետ աշխատանքները համակարգելու է ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի բաժինը, որի հետ Կատարողները կիրականացնեն բոլոր գործողությունների համակարգումը:

5.3 Վճարումը կկատարվի Կատարողի կողմից պահանջների ամբողջությամբ իրականացնելուց հետո:

6. *Խորհրդատուի ընտրության համար պահանջվող որակավորումը*

Ակնկալվում է, որ աշխատանքային պարտականությունները կատարելու նպատակով ընտրված Խորհրդատուն պետք է ունակ լինի անհրաժեշտ աշխատանքային կապեր հաստատել պետական մարմինների շահառուների, ԱՄՆ ՄԶԳ-ի, դոնոր կազմակերպությունների, ՀԿ-ների և անհատների հետ: Շահագրգիռ անձանց և կազմակերպությունների հետ հաղորդակցվի անձամբ, հեռախոսով և գրավոր հաղորդակցման միջոցներով և բավարարի հետևյալ որոկավորման պահանջներին.

- Բարձրագույն կրթություն:
- Աշխատանքային փորձ մոնիթորինգի իրականացման, մոնիթորինգային ցուցանիշների մշակման հանրային քաղաքականության կամ արդյունավետ կառավարման ոլորտներում: Նշված գերակա ոլորտներից որևէ մեկում արված աշխատանքը ողջունելի է:
- Գործողությունների հստակ ծրագրի և արդյունավետ մոնիթորինգային ծրագրերի ձևակերպման և մոնիթորինգային ցուցանիշների մշակման համար մեթոդական աջակցություն տրամադրելու ունակություն,
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն,
- Տարբեր մշակութային և աշխատանքային պայմաններում հարմարվելու (աշխատելու) ունակություն (հավաստիացում):

Ներկայացման ենթակա են՝

- ինքնակենսագրություն (CV) (անգլերեն և հայերեն),
- նշված պահանջների առաջին 2 կետերի վերաբերյալ փաստաթղթային հավաստում,
- սեփական հայեցողությամբ այլ փաստաթղթեր, որոնք կարող են վերաբերելի լինել ներկայացվող պահանջներին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք. Երևան, Սայաթ-Նովա 19
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013000311	Հ/Հ 1930000625400100
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 01538458
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ info@bc.am

Հավելված N 2
«17» նոյեմբերի 2017թ. կնքված
ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/61 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
79411220/3	Մոնիթորինգային ցուցանիշների մշակման խորհրդատվական ծառայություններ	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	3075000	3075000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարության աշխատակազմ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900013000311
ՀՎՀՀ 02505554
էլ. հասցեն՝ gnumner@gov.am

ԿԱՏԱՐՈՂ
«Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ
ք. Երևան, Սայաթ-Նովա 19
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000625400100
ՀՎՀՀ 01538458
էլ. հասցեն՝ info@bc.am

/Լ. Թոքմաջյան/
Կ.Տ.

Հավելված 3
«17» նոյեմբերի 2017թ. կնքված
ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/61 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «--» ---------- 2017 թ.
Պայմանագրի համարը՝ ----------
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «---» «-------» 2017թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«17» նոյեմբերի 2017թ. կնքված
ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/61 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն